Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր
Ավագ մասնագետ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Քրեակատարողական ծառայություն | ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ | Տնտեսական ապահովման բաժին | Ավագ մասնագետ, (12-2-ՔՀ6-Մ4-3)

1.2 Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ մասնագետներից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստան, ք. Էջմիածին, Չոբանքարա

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. մասնակցում է Հիմնարկի գույքագրման աշխատանքներին.
2. սահմանված կարգով իրականացնում է հակահրդեհային պահպանության աշխատանքներ.
3. իրականացնում է Հիմնարկում առկա կոմունալ համակարգերի վթարների վերականգնման աշխատանքներ կամ օժանդակում այդ աշխատանքներին.
4. հսկողություն է իրականացնում Հիմնարկի շենքերի ու տարածքի սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքների նկատմամբ.
5. իրականացնում է Հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին հանդերձանքով, անձնական հիգիենայի և անկողնային պարագաներով ապահովելու և հաշվառման աշխատանքներ.

Իրավունքները.

1. համապատասխան ստորաբաժանումներից պահանջել Հիմնարկի տնտեսական և նյութատեխնիկական ապահովմանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն.
2. Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ, դիտարկումներ ու հիմնավորումներ Հիմնարկի տնտեսական և նյութատեխնիկական ապահովման վերաբերյալ.

Պարտականությունները.

1. կատարել Հիմնարկի հակահրդեհային պահպանությանն առնչվող տեղեկատվության կազմումը.
2. մասնակցել Հիմնարկի վթարների վերականգնման աշխատանքներին.
3. կատարել Հիմնարկի կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակի ամփոփումը հանդերձանքով, անձնական հիգիենայի և անկողնային պարագաներով ապահովելու նպատակով.
4. պարբերաբար հետևել և արձանագրել գույքագրման շարժը.

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ նյութատեխնիկական մատակարարման կամ ճարտարագիտության կամ մաթեմատիկայի կամ ֆիզիկայի կամ տրանսպորտի
բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4. Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և ստեղծման և ապահովման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և ստեղծման և ապահովման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: